չանում ես նրա արժանի ժառանգների քաջութեան վրայ, որոնք, գազաններ-ի հետ բնակելով, սովորեցին գազանների հետ մարտնչել...

ԻԴ. ՄԻ ԳԻՒՂ ՈՇՏՈՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻՑ

Օրը երեկոյեանում էր: Նախորդ գիշերը, «գուշակողի» տաղաւարի մօտ, բոլորովին անքուն էինք մնացել, իսկ այսօր անդադար ճանապարհորդում էինք: Մեր ձիաները յոգնածութիւնից դժոարութեամբ էին շարժւում. մենք եւս հանգստանալու սաստիկ պէտք էինք զգում:

— Իմ ձին ընկնելու վրայ է, — ասացի Մուրադին, որ իմ կողքով գնում էր:

— Մինչեւ հիմա նրանք էին մեզ տանում, շուտով կը սկսենք մենք նրանց տանել, — պատասխանեց նա ծիծաղելով:

Ես նրա կատակը չհասկացայ, բայց երբ մի փոքր առաջ գնացինք, նա դարձաւ դէպի մեզ այդ խօսքերով.

— Ցած իջէ՛ք, այսուհետեւ անկարելի է ձիով գնալ, եթէ ոչ, մենք եւ թէ՛ մեր ձիաները կը գլորուենք անդունդի մէջ եւ կը կորչենք:

Մենք հնազանդուեցանք մեր առաջնորդի խորհրդին: Եւ իրաւ, մի նեղ շաւիղ իջնում էր դէպի անդնդային ձորը, եւ նրա խորքից կրկին բարձրանալով, ոլորւում էր լեռան առապարներով, յետոյ կորչում էր անտառի մթութեան մէջ: Այդ ընդարձակ վիհից պէտք է անցնէինք մենք, որի յատակը նայելիս՝ մարդու գլուխը պտտւում էր, աչքերը սեւանում էին:

Մեզանից իւրաքանչիւրը, իր ձիու սանձից բռնած, խարխափելով իջնում էր դէպի ձորը: Ձին նրա ետեւից՝ ամբողջ մարմնով դողդողալով, գլուխը ցած խոնարհեցրած, փռնչալով դէպի ամէն կողմն էր նայում, թէ ոտը ո՛ր քարի վրայ դնէ, որ ցած չգլորուի: Մի քանի ժամ այսպէս մաքառում էինք ժայռերի, մացառների եւ միմեանց մէջ հիւսուած թուփերի հետ, մինչեւ ձորի խորքից դուրս եկանք մի բարձր սարաւանդի վրայ: Մեր առջեւ բացուեցաւ մի սքանչելի հորիզոն:

Հազար անգամ աւելի տաժանական տանջանքներ ես պատրաստ կը լինէի յանձն առնել, եթէ առաջուց գիտենայի, թէ դէպի ո՛ւր է տանում մեզ այն ոլորապտոյտ շաւիղը, որ ընտրեցինք մենք, խոտորուելով երթեւեկաթեան մեծ ճանապարհից: Մեր դուրս ըկած սարաւանդը, կարծես, մի բարձր դիտանոց լինէր, որտեղից երեւում էին գեղեցիկ տեսարաններ: Ստորոտում ծփում էր լայնածաւալ ծովակը, որի եզերքը, կանաչազարդ շրջանակի նման, պատած էին շքեղ բուսականութեամբ: Մեղմ հովիկը շնչում էր մետաքսան-